

Նպատակ 1: Ամենուրեք վերացնել աղբատուությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով

1990 թ.-ից ի վեր ծայրահեղ աղբատուության մակարդակը ավելի քան կիսով չափ նվազել է: Թեպետ սա նշանակալից ձեռքբերում է, սակայն զարգացող տարածաշրջաններում դեռևս յուրաքանչյուր հինգ մարդուց մեկն ապրում է օրական 1,25 դոլարից քիչ գումարով, իսկ միլիոնավոր մարդկանց օրական վաստակը դրանից փոքր չափով է ավելի: Բացի դրանից, շատ մարդկանց սպառնում է կրկին աղբատուության մեջ հայտնվելու վտանգը:

Աղբատուությունն ավելին է, քան կայուն կենսամիջոցներ ապահովելու համար անհրաժեշտ եկամտի և ռեսուրսների պակասը: Աղբատուության դրսևորումներից են սովը և թերսնուցումը, կրթության և այլ հիմնական ծառայությունների սահմանափակ հասանելիությունը, սոցիալական խտրականությունը և մեկուսացումը, ինչպես նաև որոշումների կայացմանը մասնակցության հնարավորության բացակայությունը: Տնտեսական աճը պետք է լինի ներառական՝ ապահովելու կայուն աշխատատեղեր և խթանելու հավասարությունը:

ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ. ԻՆՉՈ՞Վ Է ԿԱՐԵՎՈՐ

Ներկայումս 30 մլն երեխա աղբատուության պայմաններում է մեծանում աշխարհի ամենահարուստ երկրներում:

Ո՞րն է նպատակը

Մինչ 2030 թ. ամենուրեք վերացնել աղբատուությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով:

Ինչո՞ւ

Ավելի քան 700 մլն մարդ դեռևս ապրում է ծայրահեղ աղբատուության մեջ և պայքարում է ամենահիմնական կարիքների բավարարման համար, որոնցից միայն մի քանիսն են առողջությունը, կրթությունը և ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը:

Դա շատ մեծ թիվ է:

Այո: Օրական 1,90 դոլարից պակաս գումարով ապրող մարդկանց ճնշող մեծամասնությունն ապրում է Հարավային Ասիայում ու Ենթասահարյան Աֆրիկայում, և նրանք կազմում են ծայրահեղ աղբատ մարդկանց համաշխարհային ընդհանուր քանակի 70%-ը:

Ցածր միջին եկամուտ ունեցող երկրներում, ներառյալ Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան և Նիգերիան, բնակվում է ամբողջ աշխարհի աղքատ մարդկանց մոտ կեսը:

Այնուամենայնիվ, այս խնդիրն առկա է նաև զարգացած երկրներում: Աշխարհի ամենահարուստ երկրներում ներկայումս 30 մլն երեխա մեծանում է աղքատության մեջ:

Ինչո՞ւ աշխարհում այսքան շատ է աղքատությունը

Աղքատությունն ունի բազմաթիվ չափումներ, սակայն դրա պատճառների թվում են գործազրկությունը, սոցիալական մեկուսացումը և բնակչության որոշակի հատվածի բարձր խոցելիությունը աղետների, հիվանդությունների և այլ երևույթների նկատմամբ, որոնք նրանց թույլ չեն տալիս արտադրողական լինել:

Ես աղքատ չեմ: Ինչո՞ւ պետք է մտահոգվեմ այլ մարդկանց տնտեսական վիճակի համար:

Պատճառները շատ են, սակայն, եթե ձևակերպենք կարճ, որպես մարդ արարածներ՝ մեզնից յուրաքանչյուրի բարեկեցությունը փոխկապված է մյուսների բարեկեցության հետ: Մեծացող անհավասարությունը բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա և վտանգում է սոցիալական համախմբվածությունը՝ մեծացնելով քաղաքական և սոցիալական ճնշումները և որոշ հանգամանքներում նպաստելով անկայունությանն ու հակամարտություններին:

Իրականում կարո՞ղ ենք հասնել այս նպատակին

Այո: Տնտեսագետ Ջեֆրի Սաքսը հաշվարկել է, որ 20 տարվա ընթացքում ամբողջ աշխարհում ծայրահեղ աղքատությունը վերացնելու համար ընդհանուր տարեկան ծախսը կկազմի 175 մլրդ դոլար: Սա ավելի քիչ է, քան աշխարհի ամենահարուստ երկրների համադրված եկամտի 1%-ը:

Այսպիսով, ի՞նչ կարող եմ անել ես

Եթե երիտասարդ ես. թո ակտիվ ներգրավածությունը քաղաքականության մշակման գործընթացում կարող է փոփոխություն բերել աղքատության խնդրի հասցեագրման հարցում: Այն ապահովում է թո իրավունքների խթանումը, թո ձայնի լսելիությունը, միջսերնդային գիտելիքի փոխանցումը և բոլոր տարիքներում նորարարության ու ստեղծարար մտածողության խրախուսումը՝ աջակցելու մարդկանց կյանքում և համայնքներում վերափոխումներին:

Եթե քաղաքականություն մշակող ես. կառավարությունները կարող են օգնել ստեղծելու բարենպաստ միջավայր՝ աղքատ և մեկուսացած մարդկանց համար արդյունավետ զբաղվածության և աշխատանքի հնարավորություններ ստեղծելու նպատակով: Նրանք

կարող են մշակել ռազմավարություններ և հարկաբյուջետային քաղաքականություններ, որոնք խթանում են կարիքավոր մարդկանց վիճակի բարելավմանն ուղղված աճ և նվազեցնում են աղքատությունը:

Եթե աշխատում ես մասնավոր հատվածում. մասնավոր հատվածը՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժ, մեծ դեր է խաղում սահմանելու՝ արդյոք այդ աճը ներառական է և հետևաբար՝ աղքատության հաղթահարմանը նպաստող: Այն կարող է նպաստել աղքատ բնակչության համար տնտեսական հնարավորությունների խթանմանը՝ կենտրոնանալով տնտեսության այն հատվածների վրա, որտեղ ակտիվ է աղքատ մարդկանց մեծ մասը, մասնավորապես՝ գերփոքր ու փոքր ձեռնարկությունների և ոչ ֆորմալ հատվածում գործունեություն ծավալողների վրա:

Եթե գիտակրթական համայնքի մասն ես կազմում. գիտակրթական համայնքը մեծ դեր ունի աղքատության ազդեցության մասին իրազեկվածության բարձրացման հարցում: Գիտությունն ապահովում է աղքատության հաղթահարման և կայուն զարգացման հասնելու մարտահրավերներին դիմակայելու նոր և կայուն դիրքորոշումներ, լուծումներ ու տեխնոլոգիաների հենքը: Գիտության նպաստն աղքատության հաղթահարման հարցում զգալի է եղել: Օրինակ՝ այն հնարավորություն է տվել հասանելի դարձնել անվտանգ խմելու ջուրը, նվազեցրել է ջրի միջոցով փոխանցվող հիվանդություններով պայմանավորված մահվան դեպքերը և բարելավել հիգիենան՝ նվազեցնելու սանիտարական պայմանների ու ոչ անվտանգ խմելու ջրի և սանիտարական պայմանների բացակայության հետ կապված առողջական ռիսկերը:

Կայուն զարգացման նպատակների և 1-ին նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>

